ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023թ. ապրիլի 21-ից 22ը Ռուսաստանի Դաշնություն (ք. Մոսկվա) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը՝**

Արմեն Սիմոնյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Ռուսաստանի Դաշնություն, ք. Մոսկվա, 2023 թվականի ապրիլի 21-ից 22

4. **Հրավիրող կողմը.**

Հրավերը ստացվել է ՌԴ փոխվարչապետ Ա. Օվերչուկից:

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Մասնակցություն «ԵԱՏՄ տեսլական-2045» խորագրով աշխատանքային նիստին:

6. **Քննարկված թեմաները.**

Քննարկվել են եվրասիական մակրոտարածաշրջանում տնտեսական զարգացման վրա ազդող գործոնները, այդ թվում՝ ապագլոբալացումը, 4-րդ արտադրական հեղափոխությունը, կլիմայական օրակարգը, էներգետիկ և տրանսպորտային անվտանգությունը:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Քննարկվել են թվայնացման և թվային տեխնոլոգիաների զարգացման ոլորտում ԵԱՏՄ-ին վերաբերելի հարցեր: Ելույթներ են հնչել ԵԱՏՄ պայմանագրով սահմանված 4 նպատակների իրագործմանն ուղղված գործընթացների խթանման վերաբերյալ:

8.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպման արդյունքներով փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկվել է շարունակել աշխատանքները տրանսպորտային թվային տեխնոլոգիաների զարգացման ոլորտում, ինչպես նաև աշխատանքներ տանել թվային տրանսպորտային միջանցքների էկոհամակարգերի ստեղծման ուղղությամբ:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

27.04.2023թ.